ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Ռ. ՍԻՄՈՆՅԱՆ

Ժողովրդական գործի անձնուրաց մարտիկների շարքում, հեղափոխությանը և մեր երկրում սոցիալիզմի կառուցմանը մատուցած իր մեծ ծառայություններով առանձնահատուկ տեղ է գրավում Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ, կոմունիստական կուսակցության և սովետական պետության ակնառոր գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը (Մարտունի)։

Ծնվել է 1886 թ. փետրվարի 9-ին Նոր Նախիջևանում, մանր առևտրական Ասատուր (Աստվածատուր) Մյասնիկովի ընտանիքում։ Ընդամենը հինգ տարեկան էր նա, երբ զրկվեց հորից։ Ընտանիքն ընկավ նյութական ծանր վիճակի մեջ։ Հոգս հոգսը ծանրացավ որևէ մասնագիտություն և կրթություն չունեցող մոր ուսերին, որը տառապանքով հայթայթում էր բազմանդամ ընտանիքի գոյության միջոցները։ Նրան, սակայն, հաջողվեց 1894 թ. ութ տարեկան Ալեքսանդրին ընդունել տալ Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքին կից գործող ծխական գիշերօթիկ դպրոցը։

1898 թ. ավարտելով այդ դպրոցը, Ալեքսանդրն ընդունվում է Նոր Նախիջևանի հայոց հոգևոր թեմական գիշերօթիկ դպրոցը։ Այս հաստատությունն ուսուցիչներ էր պատրաստում ազգային եկեղեցական ծխական դպրոցների համար։ Ճիշտ է, այստեղ ուսուցանում էին կրոն, աստվածաբանություն, եկեղեցու պատմություն, բայց, այնուամենայնիվ, առաջնային տեղը գրավում էին հայոց պատմությունը, հայոց լեզուն ու գրականությունը։ Սաներին ուսուցանում էին նաև աշխարհագրություն, տրամաբանություն, հոգեբանություն, ինչպես նաև բնական գիտություններ՝ թվաբանություն, գրահաշիվ, երկրաչափություն, եռանկյունաչափություն, բնագիտություն, տիեզերագիտություն, գծագրություն և այլն։

Ալեքսանդրը աշխատասեր, առաջադեմ աշակերտ էր, եռանդուն, մշտապես գրքերի հետ, խոհուն։ Նրա մոտ հատկապես շեշտված էր բացառիկ ընկերասիրությունը։ Թեմական դպրոցում, որտեղ ուսման տևողությունը վեց տարի էր, Ալեքսանդրը ուսումնասիրեց հայ հին գրականություն և պատմություն, ծանոթացավ Խորենացու, Եղիշեի, Եզնիկի և մյուս պատմիչների գրվածքներին։ Մեծ հետաքրքրությամբ էր ուսումնասիրում նաև հայ նոր գրականությունը։ Աբովյանը, Րաֆֆին, Նալբանդյանը նրա սիրելի գրողներն էին։ Որքան շատ էր Ալեքսանդրը խորանում նրանց երկերի ուսումնասիրության մեջ, այնքան ավելի էր մտահոգվում իր ժողովրդի ազատագրության խնդիրներով, համակվում նրա ազգային-ազատագրական պայքարի տրամադրություններով։ Աբովյանի անեզր հայրենասիրությունը, Րաֆֆու դեմոկրատիզմը, Նալբանդյանի հեղափոխական կիրքը մեծապես ազդում էին պատանու հասարակական-քաղաքական հայացքների ձևավորման ընթացքի վրա։

Նոր Նախիջևանի գաղթօջախը խուլ վայրում գտնվող բնակավայր չէր, և ոչ էլ խաղաղ ու անվրդով քաղքենիական աշխարհ։ Գտնվելով արդյունաբերական ու կուլտուրական խոշոր կենտրոնի՝ Ռոստովի շնչի տակ, Նոր Նախիջևանը մշտապես կրում էր նրա խոր ազդեցությունը, նրա միջոցով հաղորդակցվում երկրի իրադարձություններին, ապրում անհանգիստ հասարակական-քաղաքական կյանքով, ուր գաղափարական տարբեր ուղղություններ գտնվում էին մշտական պայքարի մեջ։

1902 թ. Ռոստով քաղաքում տեղի ունեցած խոշոր գործադուլները և բանվորների բազմահազար ցույցերն ու միտինգները, որոնք անցնում էին ՌՍԴԲԿ

տեղական կոմիտեի ղեկավարությամբ, լայն արձագանք էին գտնում ամբողջ Ռուսաստանով մեկ։ Ռոստովում տեղի ունեցող հեղափոխական իրադարձությունները իրենց շրջապտույտի մեջ առան նաև մերձակա արդյունաբերական կենտրոնները և բնակավայրերը, այդ թվում՝ Նոր Նախիջևանը։ Հեղափոխական տրամադրությունները թափանցում էին նաև թեմական գիշերօթիկ դպրոցի պատերից ներս, որտեղ սովորում էր Ալ. Մյասնիկյանը։

Որքան էլ դպրոցի տնօրենները փորձում էին աշակերտությանը հեռու պահել հասունացող հեղափոխական իրադարձություններից, դա նրանց չէր հաջողվում. հեղափոխական տրամադրությունները համակում էին աշակերտությանը, խմորումներ առաջ բերում նրա մեջ։

Այսպիսի պայմաններում էին ձևավորվում Ալ. Մյասնիկյանի հասարակական-քաղաքական հայացքները։ Աբովյանի և Ռաֆֆու դեմոկրատական-լուսավորական հայացքներից նա անցում է կատարում դեպի իր մեծ հայրենակից Մ. Նալբանդյանի մարտնչող մատերիալիզմը և հեղափոխական դեմոկրատիզմը։ Դրան մեծ չափով նպաստում է այն, որ Մյասնիկյանը կարդում և ուսումնասիրում է նաև Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի աշխատությունները, տարվում նրանց գաղափարներով։

1903 թ. Մյասնիկյանն ավարտում է թեմական դպրոցը։ Շրջապատի հեղափոխական իրադրությունը, հեղափոխական-դեմոկրատական հայացքները նրան մղում էին քաղաքական պայքարի ասպարեզ։ Նոր Նախիջևանի թեմական դպրոցն ավարտելուց հետո Մյասնիկյանը 1904 թ. օգոստոսին մեկնում է Մոսկվա և ընդունվում Լազարյան ճեմարանի 7-րդ դասարանը։ Լազարյան ճեմարանում սովորելու երկու տարիներին Մյասնիկյանն ավելի խորացավ հայագիտության և հասարակական գիտությունների մեջ։

Չնայած նյութական անապահով, կիսաքաղց վիճակին (գոյությունը պահպանում էր հիմնականում Նոր Նախիջևանի բարեգործական ընկերության նրպաստով), Մյասնիկյանը սկսեց ապրել մեծ քաղաքի բուռն կյանքով, աստիճանաբար ընդգրկվելով բարձրացող հեղափոխության ալիքների մեջ։ Այս ժամանակաշրջանը նրա համար նաև հետագա մտավոր զարգացման և գաղափարական-քաղաքական հասունացման կարևոր ժամանակաշրջան էր։ Հավանաբար այս ժամանակաշրջանին է վերաբերում նրա առաջին ծանոթությունը մարքսիստական գրականության հետ։

1905 թ. Մյասնիկյանը մտնում է «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության՝ սպեցիֆիկների կուսակցության մեջ, որի շարքերում, որպես նրա անդամ, մնում է մեկ տարի։ Համոզվելով, որ այդ կազմակերպությունն իր նեղ, ազգայնական ծրագրով ի վիճակի չէ գրական դեր խաղալու հեղափոխական պայքարում, Մյասնիկյանը կազմակերպչորեն խզվում է նրանից։ 1906 թ., ավարտելով Լազարյան ճեմարանը, Մյասնիկյանն ընդունվում է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։

Այդ ժամանակ արդեն հեղափոխական դեմոկրատիզմից Մյասնիկյանն անցում էր կատարում հեղափոխական մարքսիզմի դիրքերը։ 1905 թ. նա ռեֆերատ է գրում՝ «Կարլ Մարքսի արժեքի թեորիան» վերնագրով, որտեղ շարադրում է մարքսիստական քաղաքատնտեսության մի շարք հիմնական դրույթները։ Հավանաբար այդ շրջանում Մյասնիկյանը ծանոթացել է նաև Կ. Մարքսի «Կապիտալին»։ Նա շատ էր կարդում նաև փիլիսոփայական գրականություն։

Ալ. Մյասնիկյանին վիճակված չէր համալսարանում երկար մնալու։ Դեռ 1905 թ. նա գտնվում էր ոստիկանության հսկողության տակ։ Դա պատահական չէր։ Հետագայում, 1922 թ., իր անձնական գործը լրացնելիս, այդ ժամանակաշրջանի մասին Մյասնիկյանը գրել է. «Մասնակցել եմ քաղաքական գործադուլներին՝ երեք անգամ, փողոցային քաղաքական ցույցերին՝ հինգ անգամ, ուսանողական շարժումներին՝ շատ, ընդհատակյա խմբակներին՝ շատ, միտինգներին՝ շատ»[1]։

---

1 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4004, գ. 70, ց. 1։

1906 թ. նոյեմբերին, ուսանողական հեղափոխական հուզումներին մասնակցելու համար Մյասնիկյանը հեռացվում է համալսարանից և արտաքսվում Մոսկվայից։ Նա գալիս է Նոր Նախիջևան և անմիջապես նետվում գաղթօջախի հասարակական կյանքի մեջ։ Հենց այդ ժամանակ քաղաքում երիտասարդների մի խումբ ձեռնարկել էր «Նոր կյանք» հասարակական-քաղաքական շաբաթաթերթի հրատարակման գործը։ Մյասնիկյանը դառնում է թերթի ակտիվ աշխա-

տակիցը և մտնում նրա խմբագրական կազմի մեջ։ «Նոր կյանքի» 1906 թ. օգոստոսի 20-ի № 8-ում լույս է տեսնում նրա «Ներկա մոմենտը» խորագրով հոդվածը։ Դա Մյասնիկյանի առաջին տպագիր հոդվածն էր[2]։ Այնուհետև նույն թերթում լույս են տեսնում նրա մի շարք ուրիշ քաղաքական բնույթի հոդվածներ և թատերախոսություններ[3]։

1906 թ. Ալ. Մյասնիկյանը Դոնի Ռոստովում ընդունվում է ՌՍԴԲԿ շարքերը։ ՌՍԴԲԿ Ռոստովի կոմիտեի հանձնարարությամբ նա կապվում է քաղաքի և նրա շրջակայքի արդյունաբերական ձեռնարկությունների բանվորական կոլեկտիվների հետ, տանում ակտիվ հեղափոխական աշխատանք։

1906 թ. դեկտեմբերին Ալ. Մյասնիկյանը մեկնում է Բաքու և անմիջապես կլանվում հեղափոխական աշխատանքով։ Նա շփվում և ծանոթանում է քաղաքի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարների, այդ թվում նաև Ստ. Շահումյանի հետ, կատարում կուսակցական հանձնարարություններ։ Թե Մյասնիկյանն ինչպիսի լարվածությամբ էր աշխատում այդ ժամանակաշրջանում,

---

[2] Տե՛ս Ալեքսանդր Մյասնիկյան. Երկեր հինգ հատորով. հ. I, Երևան, 1934, էջ 25—27։

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 27—40։

երևում է թեկուզ ընկերոջը գրած նրա մի նամակից. բանվորական ժողովներ, զեկուցումներ նավթահանքերում, պրոպագանդիստական աշխատանք բանվորական խմբակներում, բանվոր ագիտատորների պատրաստում և այլն[4]։ Եվ այդ ամենը՝ Ստոլիպինյան ռեակցիայի ծանր ժամանակաշրջանում սանձազերծած քաղաքական ահաբեկչության պայմաններում։

Գործունեության Բաքվի շրջանում Ալ. Մյասնիկյանը հատկապես եռանդուն պայքար էր մղում դաշնակցության դեմ, որն ամեն կերպ աշխատում էր իր ազդեցությունը տարածել նավթաշխարհի հայ բանվորության վրա։ Նա իր բանավոր ելույթներով և հոդվածներով[5] բազմազգ աշխատավորներին ինտերնացիոնալ համախմբման և համատեղ գործելու կոչ էր անում, նպաստում նրանց քաղաքական ակտիվության բարձրացմանը։

1908 թ. սեպտեմբերին Մյասնիկյանը Բաքվից մեկնում է Մոսկվա և ուսումը շարունակում համալսարանի իրավաբանական ֆակուլտետի տնտեսագիտական բաժնում։ Այստեղ նա իրավաբանական և տնտեսագիտական խոր դիտելիքներ էր ստանում։ Դրա հետ միասին նա նախկինի նման շատ ժամանակ էր տրամադրում գեղարվեստական գրականությանն ու արվեստին, հատկապես եվրոպական դասականներին։

Գալով Մոսկվա, Մյասնիկյանը կապվում է տեղի կուսակցական կազմակերպության հետ։ Նրան հանձնարարում են վարել ուսանողական խմբակներից մեկը։ Պրոպագանդիստական աշխատանք ծավալելով բանվորների շրջանում, նա միաժամանակ շարունակում է գրել գրքննադատական բնույթի հոդվածներ, որոնք լույս են տեսնում գերագանցապես Կովկասի սոցիալ-դեմոկրատական ուղղության մամուլի զանազան օրգաններում[6]։

1911 թ. մայիսին Ալ. Մյասնիկյանն ավարտում է Մոսկվայի համալսարանը, ստանում առաջին կարգի դիպլոմ. նրան շնորհվում է իրավաբանի կոչում։ Նույն թվականի հոկտեմբերին նա կանչվում է բանակ և զինվորական ծառայության նշանակվում Մոսկվայի զորամասերից մեկում, որտեղ մնում է գրեթե մեկ տարի՝ մինչև հաջորդ տարվա սեպտեմբերը։ Զինվորական ծառայության ժամկետը Մյասնիկյանն օգտագործում է խիստ արդյունավետ՝ եռանդուն կերպով ուսումնասիրելով ռազմական արվեստի հիմունքները։ 1912 թ. մայիսին նրան տրվում է եֆրեյտորի, օգոստոսին՝ կրտսեր պորուչիկի զինվորական աստիճան։ Սեպտեմբերին քննություններ է հանձնում պորուչիկի աստիճանի համար, որը նրան շնորհվում է նոյեմբերին։

Բանակում եղած ժամանակ էլ չի ընդհատվում Մյասնիկյանի հեղափոխական և գրական-հրապարակախոսական գործունեությունը։ Նա շարունակում է կատարել կուսակցական հանձնարարություններ, հրատարակում մարքսիզմի պաշտպանության դիրքերից գրած «Հասարակական դասակարգերի մասին», «Արդի տնտեսական կյանքը» աշխատությունները, բազմաթիվ հոդվածներ ու գրախոսություններ[7]։

1912 թ. սեպտեմբերին զորացրվելով բանակից, Մյասնիկյանը իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի է անցնում Մոսկվայում՝ իբրև երդվյալ հավատարմատարի օգնական։ Համեմատաբար թեթև աշխատանքը նրան հնարավորություն է տալիս շարունակելու ակտիվ կուսակցական և հրապարակախոսական գործունեությունը։ Մարքս-լենինյան տեսության, Ռուսաստանի ժողովրդական մասսաների սոցիալ-տնտեսական ծանր վիճակի հարցեր, հայոց գրերի գյուտի 1500 և հայ տպագրության 400-ամյակների տոնակատարությունների առթիվ խորհրդածություններ, Միքայել Նալբանդյանի և անցյալի հայ հասարակական մտքի ու մշակույթի ականավոր ներկայացուցիչների վերագնահատում ու արժեքավորում, իր ժամանակաշրջանի ռուս, հայ, արևմտաեվ-

---

4 Տե՛ս Մկի ՀՄԿԱ, ֆ. 4004, գ. 5, ռ. 1, թ. 8։

5 Տե՛ս Ալեքսանդր Մյասնիկյան. Նշվ. աշխ., հ. I, էջ 40—55։

6 Տե՛ս նույն տեղում, էջ 55—90։

7 Տե՛ս նույն տեղում, էջ 94—199։

րոպական գրական պրոցեսների վերլուծություն ու գնահատում, հայության պատմական ճակատագրի և Արևմտյան Հայաստանի ապագայի վերաբերյալ հարցեր, գրականության և արվեստի տեսական պրոբլեմներ՝ ահա ոչ լրիվ թվարկումն այն խնդիրների, որ այդ շրջանի իր տեսական-հրապարակախոսական գործունեության մեջ բարձրացնում և որոնց լուծումներ էր առաջարկում Ալ. Մյասնիկյանը[8]։ Նա շարունակում է ուշադրության կենտրոնում պահել նացիոնալիզմի դեմ պայքարի հարցերը, գտնելով, որ հատկապես Անդրկովկասի պայմաններում այն ընդունակ է մեծ աղետներ բերելու երկրամասի ժողովուրդներին։

«Նոր կյանք», «Մշակ» թերթերում, «Մեր ուղին» ժողովածուում, ուրիշ այլ պարբերականներում լույս են տեսնում Ալ. Մյասնիկյանի «Ազգային հարցի առթիվ», «Երկու կուլտուրական տոն», «Հայկական մանչեստրականությունը», «Գաղթային հարցը», «Ազգային հարցի մոտիկ անցյալից Ռուսաստանում», և այլ աշխատություններ[9], որոնք գրված էին մարքս-լենինյան մեթոդոլոգիայով և հիմնականում ուղղված էին մարքսիզմի հակառակորդների հարձակումներից ու աղավաղումներից գիտական սոցիալիզմի ուսմունքի պաշտպանությանը։ Մյասնիկյանն ուժգին քննադատության էր ենթարկում մասնավորապես Ռուսաստանի գյուղացիական համայնքի դերի մասին էսէռական գերաճ պատկերացումները, բունդականների նացիոնալիստական նկրտումները, Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության համար անհրաժեշտ պայմանների բացակայության մասին ռևիզիոնիստական կոնցեպցիաները։

1914 թ. համաշխարհային պատերազմի նախօրյակին, հուլիսին, Ալ. Մյասնիկյանը կրկին զորակոչվեց ցարական բանակ կրտսեր սպայի՝ պորուչիկի զինվորական կոչումով և նշանակվեց Մոսկվայում տեղակայված պահեստային գումարտակներից մեկի վաշտի հրամանատար։ 1915 թ. հունվարին նրան նշանակում են կրտսեր հրամանատարական կազմի ուսումնավարժական դպրոցի պետ։ Դա Մյասնիկյանին հնարավորություն տվեց է՛լ ավելի խորանալու ռազմական արվեստի մեջ, ընդլայնելու իր կապերը հեղափոխականորեն տրամադրված զինվորականների հետ։

Շուտով Մյասնիկյանին ուղարկում են ռազմաճակատ, և նա ակտիվորեն մասնակցում է ռազմական գործողություններին։ Որպես խիզախ հրամանատար 1915 թ. նա պարգևատրվում է Սուրբ Ստանիսլավի երրորդ աստիճանի, 1916 թ.՝ Սուրբ Աննայի երրորդ աստիճանի և Սուրբ Ստանիսլավի երկրորդ աստիճանի շքանշաններով։

Բայց դա չէր խանգարում, որ հերոս հրամանատարը զինվորների մեջ հեղափոխական աշխատանք տաներ։ 1914 թ. հոկտեմբերին հրապարակած «Պատերազմը և ռուսական սոցիալ-դեմոկրատիան» մանիֆեստով Վ. Ի. Լենինն առաջ էր քաշել իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու լոզունգը։ Բոլշևիկները եռանդուն աշխատանք էին տանում ոչ միայն բանվորների ու գյուղացիների, այլև, որ շատ կարևոր էր, ռազմաճակատի ու թիկունքի զինվորական միավորումներում, հենց ռազմադաշտերում ու խրամատներում։ Մյասնիկյանը փայլուն կերպով է կատարում զինվորների հեղափոխականացման ուղղությամբ իրենց գնդի կուսակցական կազմակերպության որոշումները։

1917 թ. փետրվարյան հեղափոխության և ցարի տապալման լուրը Ալ. Մյասնիկյանին հասավ Արևմտյան ռազմաճակատում։ Հսկայական գիտելիքներ ունեցող անձնվեր հեղափոխական գործիչը սկսված հեղափոխության մեջ ներգրավվելով՝ շատ շուտով դարձավ համառուսաստանյան մասշտաբի քաղաքական ու զինվորական խոշոր գործիչ։

1917 թ. ապրիլի 6-ին Մինսկում բացվեց Արևմտյան ռազմաճակատի բանակների ներկայացուցիչների համագումարը, որին մասնակցելու ուղարկվեց

---

8 Տե՛ս նույն տեղում, էջ 199—276։

9 Տե՛ս նույն տեղում, էջ 199—284։

նաև պրապորշչիկ Մյասնիկյանը։ Այստեղ նա բոլշևիկների անունից հանդես եկավ ժամանակավոր կառավարության ներքին և արտաքին քաղաքականության խիստ քննադատությամբ, որն ուժեղ տպավորություն թողեց համագումարի մասնակիցների վրա[10]։ Համագումարն ընտրեց 75 հոգուց բաղկացած ռազմաճակատային զինվորական կոմիտե, որի կազմում առաջադրվեց նաև Ալ. Մյասնիկյանը։ Կոմիտեի առաջին նիստում նա առաջադրվում է կոմիտեի նախագահության կազմում և գլխավորում կոմիտեի իրավաբանական հանձնաժողովը։ Վերադառնալով զորամասերը, Մյասնիկյանը մեծ աշխատանք է տանում զինվորների շրջանում՝ անդուլ կերպով պրոպագանդելով բոլշևիկյան կուսակցության քաղաքականությունը, Վ. Ի. Լենինի ապրիլյան թեզիսները, որում տրված էին բուրժուադեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստականին անցնելու խնդիրները։ Նա հսկայական ջանքեր էր գործադրում բանակում բոլշևիկների ազդեցությունը ուժեղացնելու, բանակը հեղափոխության կողմը գրավելու, միապետական սպայության հակահեղափոխական դավադրությունները և ռազմաճակատում նոր հարձակման նախապատրաստությունները խափանելու համար։

1917 թ. հունիսին Արևմտյան ռազմաճակատի նշանավոր բոլշևիկ գործիչներ Ալ. Մյասնիկյանը, Մ. Ֆրունզեն, Վ. Կնորինը և ուրիշներ որոշում են ստեղծել ռազմաճակատային ինքնուրույն բոլշևիկյան կազմակերպություն՝ անջատվելով «սոցիալ-հայրենասերներից»՝ մենշևիկներից և էսէռներից։ Հունիսի 1-ին հրավիրված Մինսկի կայազորի և քաղաքի բոլշևիկների միացյալ ժողովը հավանություն է տալիս այդ գաղափարին, իսկ հունիսի 4-ին ստեղծվում է Մինսկի բոլշևիկյան կազմակերպությունը։ Նույն օրն ընտրվում է ՌՍԴԲԿ Մինսկի ժամանակավոր կոմիտե՝ Ալ. Մյասնիկյանի նախագահությամբ։ Ըստ էության նա դարձավ Արևմտյան մարզի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարը։

Այդ պաստում Մյասնիկյանը հսկայական աշխատանք է տանում բուրժուազգայնական կուսակցությունների, մենշևիկների և էսէռների քաղաքական ազդեցության թուլացման, սոցիալիստական հեղափոխության քաղաքական բանակի ղեկավար ուժի ամրապնդման, ստեղծված ծանր կացությունը զինվորներին պարզաբանելու, աշխատավոր լայն մասսաներին բոլշևիզմի դրոշի շուրջը համախմբելու ուղղությամբ։ Նա գրեթե ամեն օր, այն էլ մի քանի անգամ, հանդես է գալիս բանվորների ու զինվորների ժողովներում ու միտինգներում, պարզաբանում մոմենտի խնդիրները, բոլշևիկյան կուսակցության քաղաքականությունը։

Մասսաների քաղաքական դաստիարակության գործում Մյասնիկյանը բացառիկ կարևոր նշանակություն էր տալիս մամուլին։ Ահա թե ինչու մեծ ջանքերի գնով նրան հաջողվում է ստեղծել «Զվեզդա» բոլշևիկյան օրաթերթը, որի առաջին համարը լույս տեսավ հուլիսի 27-ին։ «Ծառայել աշխատավոր խավերի շահերին՝ նրանց հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի փորձված ու փառաբանված դրոշի շուրջը համախմբելու միջոցով—ահա մեր օրգանի ամենաէական խնդիրը»[11],— գրում էր Մյասնիկյանը թերթի առաջին համարի առաջնորդող հոդվածում։ Թերթում, որի խմբագիրն ինքը Մյասնիկյանն էր, մեկը մյուսի ետևից լույս էին տեսնում նրա հոդվածներն ու առաջնորդողները՝ լենինյան հարցադրումների ոգով, բանիմացությամբ ու բոլշևիկյան սկզբունքայնությամբ[12]։ Կարճ ժամանակում «Զվեզդան» դարձավ բանվորների ու զինվորների սիրելի թերթը, որը բոլշևիկյան մարտնչող կուսակցականության դիրքերից նրանց էր հասցնում լենինյան ճշմարտացի խոսքը երկրում և ռազմաճակատում տիրող իրավիճակի, հեղափոխության հետագա զարգացման խնդիրների մասին։

---

10 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4004, ց. 1, գ. 113, թ. 41։

11 Ալ. Մ յ ա ս ն ի կ յ ա ն. Նշվ. աշխ., հ. I, էջ 299։

12 Տե՛ս նույն տեղում, էջ 299—315, 319—328։

1917 թ. հուլիսի վերջին Մինսկի բոլշևիկները Ալ. Մյասնիկյանին իբրև պատվիրակ ուղարկում են ՌԿ(բ)Կ VI համագումար։ Հենց առաջին նիստում նա հանդես է գալիս և առաջարկում համագումարի օրակարգի մեջ մտցնել բանակում տարվող բոլշևիկյան աշխատանքի և այն հեղափոխության կողմը նվաճելու հարցը, որի քննարկումը համագումարում չէր նախատեսվել։ «Մեր կուսակցությունը քիչ է աշխատում Արևմտյան ռազմաճակատում,— ասաց նա։— Ես գանում եմ, որ մեր համագումարը պետք է զբաղվի այս հարցով»[13]։

Վերադառնալով համագումարից, Ալ. Մյասնիկյանը բուռն գործունեություն ծավալեց Մինսկում և Արևմտյան ռազմաճակատում՝ կուսակցության համագումարի դիրեկտիվներն իրականացնելու համար։ Օգոստոսի 14-ին նա Մինսկի համաքաղաքային կուսակցական ժողովում զեկուցում է տալիս համագումարի որոշումների և Արևմտյան ռազմաճակատի ու Մինսկի բոլշևիկների՝ այդ որոշումից բխող խնդիրների մասին։ Այնուհետև անդադրում աշխատանք մասսաների մեջ՝ զեկուցումներ և զրույցներ զորամասերում, բանվորական ժողովներում, աշխատավորական միտինգներում, ելույթներ «Զվեզդա» թերթում։ Նա տալիս էր իրադարձության ճշմարտացի վերլուծությունը, առաջ քաշում հեղափոխական մասսաներին հուզող կոնկրետ խնդիրներ։

Ժամանակավոր կառավարությունը, հակառակ ժողովրդական մասսաների կամքի, հարձակման հրաման էր տվել ռազմաճակատներում, սակայն հարձակումն անհաջողության էր մատնվել։ Բուրժուական և էսէռա-մենշևիկյան մամուլը լայն կամպանիա էր սկսել բոլշևիկների դեմ, նրանց մեղադրելով բանակը բարոյապես քայքայելու, հարձակման դեմ պրոպագանդա մղելու համար։ Մյասնիկյանը զեկուցումներով ու ելույթներով, իր գրավոր խոսքով մերկացնում էր հեղափոխության թշնամիների զրպարտությունները՝ ուղղված բոլշևիկների դեմ, մասսաներին կոչ անում աչալուրջ լինել, ժամանակին խափանել նրանց դավերը։

Կուսակցության համագումարից վերադառնալուց հետո Մյասնիկյանը ձեռնարկեց Հյուսիս-արևմտյան մարզի բոլշևիկյան կազմակերպությունները միավորելու և մեկ միասնական կազմակերպություն ստեղծելու գործը։ 1917 թ. սեպտեմբերի սկզբին Մինսկում հրավիրված ՌՍԴ(բ)Կ Արևմտյան ռազմաճակատի և Հյուսիս-արևմտյան մարզի բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը, որն անցավ Ալ. Մյասնիկյանի ղեկավարությամբ, բանաձև ընդունեց այդպիսի միավորման օգտին։ Նույն ամսի 15—17-ը Ալ. Մյասնիկյանի նախագահությամբ Մինսկում տեղի ունեցած բոլշևիկյան կազմակերպությունների առաջին կոնֆերանսը իրականացրեց այդ կազմակերպությունների փաստական միավորումը։ Կոնֆերանսն ընտրեց կուսակցության Հյուսիս-արևմտյան մարզային կոմիտե, որի նախագահ առաջադրվեց Ալ. Մյասնիկյանը։

Մարզային կոմիտեի նախագահը հսկայական ջանքեր էր գործադրում Մինսկի և Հյուսիս-արևմտյան մարզի մյուս քաղաքների սովետներում բոլշևիկների ազդեցությունն ուժեղացնելու ուղղությամբ։ Նրա բուռն գործունեությունը իր պտուղներն էր տալիս՝ տեղի էր ունենում սովետների արագ բոլշևիկացման, մասսաներին հեղափոխության կողմը գրավելու արագ պրոցես։

1917 թ. հոկտեմբերի 5—7-ը Մինսկում տեղի ունեցած Հյուսիս-արևմտյան մարզի կուսակցական կազմակերպության կոնֆերանսը, որը նույնպես անցավ Ալ. Մյասնիկյանի նախագահությամբ, կարևոր ուղենիշ եղավ մարզում դինված ապստամբության նախապատրաստման և հեղափոխական ուժերի հանախմբման ճանապարհին։ Սկսվեց դժվարին, դրամատիկ պայքար մարզում սովետական իշխանության հաստատման համար։

Բոլշևիկյան կուսակցության գլխավորությամբ Պետրոգրադում հաղթանակած զինված ապստամբության լուրը Հյուսիս-արևմտյան ռազմաճակատ հասավ մեկ օր հետո։ Էսէռներն ու մենշևիկներն իրենց իշխանությունը փրկե-

13 Նույն տեղում, էջ 295։

լու, Մինսկի սովետը և Հյուսիս-արևմտյան մարզի բոլշևիկյան կազմակերպությունը ջախջախելու համար դիմեցին բացահայտ ուժի։ Սակայն բոլշևիկների գլխավորությամբ բանվորներն ու զինվորները կարողացան կոտրել հակահեղափոխական ուժերի դիմադրությունը։ Նորից հրապարակի վրա էր «Զվեզդան»՝ իր հեղափոխական կոչերով, Ալ. Մյասնիկյանի խմբագրականներով և հոդվածներով[14]։ Նոյեմբերի 4-ին հեղափոխական ուժերը ջախջախեցին Մինսկի էսէռա-մենշևիկյան, այսպես կոչված, «Հեղափոխության փրկության կոմիտեն», իսկ որոշ ժամանակ անց՝ նաև ռազմաճակատում շտապ ստեղծված այն «փրկության» կոմիտեներն ու կազմակերպությունները, որոնք կոչված էին կանգնեցնելու սկսված սոցիալիստական հեղափոխության երթը։ Այդ օրերին Ալ. Մյասնիկյանը փայլուն կերպով իրականացրեց նաև բանակի՝ Մոգիլյովում կենտրոնացած հակահեղափոխական հրամանատարության «վերսալյան որջի» լիկվիդացումը։

1917 թ. նոյեմբերի 20-ին բացված Արևմտյան ռազմաճակատի բանակների երկրորդ համագումարը, որն անցավ Ալ. Մյասնիկյանի ղեկավարությամբ, ընդունեց դեկլարացիա Հյուսիս-արևմտյան մարզում սովետական իշխանության հաստատման մասին։ Համագումարը նոյեմբերի 24-ին Մյասնիկյանին ընտրեց Արևմտյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար[15]։ Նա միաժամանակ մնում էր որպես Հյուսիս-արևմտյան մարզի բոլշևիկյան կազմակերպության ղեկավար և ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ։ Հաջորդ օրը՝ նոյեմբերի 25-ին, «Զվեզդա» թերթը տպագրեց հետևյալ հաղորդագրությունը. «Արևմտյան ռազմաճակատի բանակների 2-րդ ճակատային համագումարը ռազմաճակատի գլխավոր հրամանատար ընտրեց ընկ. Ալեքսանդր Ֆեոդորովիչ Մյասնիկովին։ Ընկ. Մյասնիկովը հեղափոխական շարժման առաջնորդն է Արևմտյան ռազմաճակատում։ Ընկ. Մյասնիկովը այստեղ ստեղծել է մասսաների հզոր կազմակերպություն, որը հաղթանակ տարավ։ Հենվելով այդ հզոր կազմակերպության վրա, ընկ. Մյասնիկովն այժմ կանգնում է բանակի գլուխը։

Կեցցե՛ Ռուսաստանյան ժողովրդական բանակի առաջին ընտրովի գլխավոր հրամանատարը»[16]։

Արևմտյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի պաշտոնում Ալ. Մյասնիկյանը մնաց հինգ ամիս՝ 1917 թ. նոյեմբերի 25-ից մինչև 1918 թ. ապրիլի կեսերը։ Մի որոշ ժամանակ նա նաև Հարավ-արևմտյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար էր, իսկ սովետական հանրապետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար Կռիլենկոյի Պետրոգրադ մեկնելու կապակցությամբ վերջինիս հրամանով Ալ. Մյասնիկյանը ժամանակավորապես նշանակվեց նրա պաշտոնակատար՝ 1917 թ. դեկտեմբերի 12-ից մինչև դեկտեմբերի 21-ը, այսինքն՝ 10 օր։

Իր ձեռքում կենտրոնացնելով Հյուսիս-արևմտյան մարզի և՛ կուսակցական, և՛ ռազմական ղեկավարությունը, Ալ. Մյասնիկյանը վիթխարի գործունեություն ծավալեց մասսաների քաղաքական ակտիվությունը բարձրացնելու, սովետական իշխանությունն ամրապնդելու, բանակը սովետականացնելու և դեմոկրատացնելու, այնտեղ ամուր կարգապահություն հաստատելու, հակահեղափոխականներին մեկուսացնելու, ցարական սպայության ուժերը բանակի վերակառուցման նպատակին օգտագործելու համար և այլն։ Նրա բազմաթիվ հոդվածները, կոչերը, դեկրետները, զինվորական հրամանները[17] տասնյակ հազար օրինակներով տպագրվում ու տարածվում էին զինվորական մասերում ու գործարաններում, նպաստում հեղափոխության խորացմանը, սովետական իշխանության ամրապնդմանը, ռազմաճակատում և թիկունքում հեղա-

---

14 Տե՛ս Ալեքսանդր Մյասնիկյան. նշվ. աշխ., հ. II, Երևան, 1984, էջ 15—25, 33—43։

15 Տե՛ս նույն տեղում, էջ 43։

16 Նույն տեղում, էջ 344—345։

17 Տե՛ս նույն տեղում, էջ 47—333։

փոխական կարգ ու կանոնի հաստատմանը։ Մյասնիկյանի երկաթե ձեռքը ամենուրեք էր՝ 1917 թ. կյանքի կոչված բուրժուա-կալվածատիրական «Բելոռուսական ռադայի» ցրում, ռեակցիոն ցարական գեներալ Դովբոր-Մուսնիցկու հակահեղափոխական խռովության ջախջախում, Մինսկում նոր իշխանության դեմ դավադրություն նյութող գաղտնի կազմակերպության վերացում։ Այնուհետև, որպես Հարավ-արևմտյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի պաշտոնակատար Մյասնիկյանը մեծ աշխատանք է կատարում Ուկրաինայում խռովություն բարձրացրած ցարական գեներալներ Կալեդինի և Դուտովի, ինչպես նաև Պետլյուրայի գլխավորած ուկրաինական բուրժուական ռադայի դեմ պայքար կազմակերպելու ուղղությամբ։

Դեռևս 1917 թ. նոյեմբերի 9-ին Վ. Ի. Լենինի գլխավորած ժողկոմխորհուրդը դիմել էր բոլոր բանակներին, կոչ անելով հաշտության գործը վերցնել իրենց ձեռքը։ Դեկտեմբերի 2-ին կնքվեց ընդհանուր զինադադար և սկսվեցին հաշտության բանակցություններ գերմանացիների հետ։

1918 թ. հունվարի սկզբին Ալ. Մյասնիկյանը մեկնում է Պետրոգրադ, մասնակցում Սահմանադիր ժողովին։ Այստեղ էլ նա առաջին անգամ տեսնում է Վ. Ի. Լենինին, մասնակցում նաև սովետների համառուսաստանյան III համագումարին։

Վերադառնալով Մինսկ, Ալ. Մյասնիկյանը 1918 թ. հունվար-փետրվար ամիսներին, Գերմանիայի հետ հաշտություն կնքելու շրջանում, բոլոր ջանքերը գործադրում է բանակի մարտունակությունը պահպանելու համար՝ նկատի ունենալով վերահաս ռազմական ընդհարման վտանգը։

1918 թ. փետրվարի 18-ին, խախտելով զինադադարի համաձայնագիրը, գերմանական բանակները հարձակման անցան ռազմաճակատի բոլոր հատվածներում։ Մյասնիկյանն աշխատում էր մոբիլիզացնել հին բանակի մնացորդների և կարմիրգվարդիական ջոկատների ուժերը թշնամուն հակահարված տալու համար։

1918 թ. ապրիլի 10-ին Սմոլենսկում հրավիրված Արևմտյան մարզի սովետների II համագումարում կուսակցության մարզային կոմիտեի նախագահ Ալ. Մյասնիկյանն ընտրվեց նաև մարզգործկոմի նախագահ, այդ պաստում աշխատելով մինչև մայիսի վերջը։ Սմոլենսկը դարձավ մարզի նոր կենտրոնը, որտեղ Մյասնիկյանը կարճ ժամանակում խոր հետք թողեց. նրա նախաձեռնությամբ բացվեցին կուսակցական կադրերի պատրաստման դպրոց, կրթական և կուլտուրական ուրիշ հաստատություններ։ Նա եղավ նաև Սմոլենսկի համալսարանի հիմնադիրը։

1918 թ. մայիսի 30-ին Ալ. Մյասնիկյանը կանչվում է Մոսկվա և նշանակվում Արևելյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար։ Չեխոսլովակյան կորպուսի բարձրացրած հակասովետական խռովությունը ջախջախելու համար մոբիլիզացվում և այնտեղ էին ուղարկվում կուսակցության նվիրված ու փորձված կադրեր։ Մյասնիկյանը հունիսի 4-ին ժամանում է Սիզրան՝ Արևելյան ռազմաճակատի շտաբ-կայանը և ականատես լինում ռազմաճակատի աղետալի վիճակին։ Նա անմիջապես գործի է անցնում ռազմաճակատի բանակների մարտունակությունը բարձրացնելու, զինվորական մասերում հեղափոխական կարգ ու կանոն հաստատելու, հակահեղափոխության և սաբոտաժի դեմ պայքարն ուժեղացնելու համար։ Շուտով լուրջ տարաձայնություններ են առաջանում Ալ. Մյասնիկյանի և ռազմժողկոմ Տրոցկու միջև։

Ընդամենը մեկ ամիս մնալով Արևելյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի պաշտոնում, Մյասնիկյանը ետ է կանչվում և նորից ուղարկվում Հյուսիս-արևմտյան մարզ։ 1918 թ. հունիսի 29-ին տեղի ունեցած ՌԿ(բ)Կ մարզային կոմիտեի նիստը Մյասնիկյանին նորից առաջադրում է մարզկոմի ղեկավար և մարզգործկոմի նախագահ։ Նորից եռանդուն աշխատանք, նորից մեծ թվով հոդվածներ «Զվեզդա», Սմոլենսկի սովետի «Իզվեստիա» և «Զապադնայա կոմունա», Վիլնոյի «Կոմունիստ» թերթերում, հսկայական ջանքեր մարզում եղած զորամասերի մարտունակությունը բարձրացնելու ուղղու-

թյամբ։ Կարմիր բանակի շինարարության հարցերին նվիրված նրա բազմաթիվ հոդվածներն ու հրամանները, նրա ելույթներն ու զեկուցումները[18] հսկայական նշանակություն են ունենում բանվորա-գյուղացիական պետության զինված ուժերի ամրապնդման գործում։ Մյասնիկյանի մեծ ու բազմազան աշխատանքի շնորհիվ դրվում են մարզում կուսակցական և սովետական շինարարության ամուր հիմքերը, լուծվում են սկզբունքային շատ հարցեր։ Սակայն այդ շրջանում Հյուսիս-արևմտյան մարզում նրա ամենախոշոր ծառայությունն այն եղավ, որ նա հմտորեն գլխավորեց աշխատավորների պայքարը գերմանական օկուպանտների, «Բելոռուսական ռագային», էսէռների և մենշևիկների միացյալ ուժերի դեմ՝ հանուն մարզում սովետական իշխանության վերականգնման։ 1919 թ. սկզբին ազատագրվեց Բելոռուսիայի գրեթե ամբողջ տարածքը և այնտեղ կրկին հաստատվեցին սովետական կարգեր։

1918 թ. դեկտեմբերի 30-ին Սմոլենսկում բացվեց կուսակցության Հյուսիս-արևմտյան մարզի 6-րդ կոնֆերանսը։ Առաջին նիստի ավարտին Ալ. Մյասնիկյանի առաջարկով կոնֆերանսն անվանվեց Բելոռուսիայի կոմկուսի առաջին, հիմնադիր համագումար[19]։

Համագումարը ողջույնի խոսքով բացեց Ալ. Մյասնիկյանը և հաղորդում արեց այն մասին, որ ՌԿ(բ)Կ Կենտկոմը և ՌՍՖՍՀ ժողկոմխորհուրդը որոշում են ընդունել Բելոռուսական Սովետական սուվերեն հանրապետություն (ԲՍՍՀ) ստեղծելու վերաբերյալ։ Այնուհետև նա համագումարում ընդարձակ զեկուցում տվեց, որի թեզերի հիման վրա համագումարն ընդունեց բանաձև ԲՍՍՀ կազմելու մասին[20]։ Համագումարն ընտրեց Բելոռուսիայի կոմկուսի կենտրոնական-բյուրո, որի նախագահ առաջադրվեց Ալ. Մյասնիկյանը։ 1918 թ. դեկտեմբերի 31-ին ստեղծվեց նաև Բելոռուսիայի ժամանակավոր հեղափոխական բանվորա-գյուղացիական կառավարություն՝ Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ։ Այսպիսով, լենինյան ականավոր գործիչը 1918 թ. վերջին օրը դառնում է Բելոռուսիայի կոմկուսի և Բելոռուսիայի սովետական հանրապետության առաջին ղեկավարը։

Այս մեծ ու պատասխանատու պաշտոններում Մյասնիկյանը լիովին բացահայտում է կուսակցական ու պետական խոշոր գործչի բազմակողմանի տաղանդ և ունակություններ, ողջ ուժերն ու եռանդը նվիրաբերում կուսակցական ու սովետական աշխատանքի կազմակերպմանը և բարելավմանը, կուսակցության գծի անշեղ կենսագործմանը։

1919 թ. մարտին Ալ. Մյասնիկյանը մեկնում է Մոսկվա և մասնակցում կուսակցության VIII համագումարին։ Նախօրյակին կուսակցության մեջ լուրջ տարաձայնություններ էին առաջացել բանակի շինարարության հարցում։ Ալ. Մյասնիկյանը մինչ համագումար գալը որոշ տուրք էր տվել կուսակցության մեջ առաջացած այսպես կոչված «զինվորական օպոզիցիային», բայց համագումարից առաջ, մարտի 17-ին, Կրեմլում Վ. Ի. Լենինի մոտ հրավիրված զինվորական աշխատողների խորհրդակցությունից հետո, որին մասնակցել էր նաև ինքը, անվերապահ և ամուր կանգնեց առաջնորդի այն տեսակետին, որ անհրաժեշտ է ունենալ կարգապահ ու միաձույլ բանակ՝ կուսակցության ղեկավարությամբ։ ՌԿ(բ)Կ VIII համագումարը ջախջախեց «զինվորական օպոզիցիայի» տեսակետները և ընդունեց կարմիր բանակի կառուցման վերաբերյալ Վ. Ի. Լենինի առաջարկած բանաձևը։

1919 թ. ապրիլի վերջին ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ Ալ. Մյասնիկյանը տեղափոխվում է Մոսկվա և նշանակվում հանրապետության մայրաքաղաքի կուսակցական կոմիտեի ռազմական կազմակերպիչ, այդ պաստում մնալով ութ ամիս՝ մինչև 1920 թ. հունվարի կեսերը։

---

18 Տե՛ս Ալեքսանդր Մյասնիկյան. նշվ. աշխ., հ. III, Երևան, 1985, էջ 17—39, 42—143, 145—150, 153—176, 178—180 և այլն։

19 Տե՛ս նույն տեղում, էջ 377։

20 Տե՛ս նույն տեղում, էջ 368, 384—385։

Սպիտակգվարդիական գեներալ Դենիկինի՝ հարավից դեպի Մոսկվա սկսած արշավանքի կապակցությամբ սպառնալից էր դարձել մայրաքաղաքի վիճակը։ Անհրաժեշտ էր քաղաքական-կազմակերպական և ռազմապաշտպանական լայն միջոցառումներ իրականացնել։ Եվ Մյասնիկյանը հսկայական աշխատանք է ծավալում Մոսկվայի և նրա շրջակայքի զինվորական մասերի մարտունակությունը բարձրացնելու, մայրաքաղաքի կայազորի զորամասերում կուսակցական-քաղաքական աշխատանքները կանոնավորելու, ռազմական դրության համեմատ համապատասխան կազմակերպությունների գործունեությունը վերակառուցելու, պաշտպանական շաբաթներ կազմակերպելու, նոր զինվորական մասերի ձևավորման և հատուկ նշանակության ջոկատներ կազմավորելու, կոմունիստներին և կոմերիտականներին մոբիլիզացնելու և ռազմաճակատ ուղարկելու, զենքի և զինամթերքի անխափան արտադրությունը ապահովելու ուղղությամբ։ Նա փայլուն կերպով է կատարում նաև դենիկինյան հարձակման շրջանում Մոսկվայի Պաշտպանության կոմիտեի շտաբի պետի պարտականությունը, որն այդ օրերին դրվել էր իր վրա։

1920 թ. հունվարի 13-ին ՌԿ (բ)Կ Մոսկվայի կոմիտեի նիստում Ալ. Մյասնիկյանն ընտրվում է քաղկոմի քարտուղար։ Գլխավորելով մայրաքաղաքի կուսակցական կազմակերպությունը, նա հաճախ է հանդիպում Վ. Ի. Լենինի հետ, ստանում նրա ցուցումներն ու խորհուրդները։ Մյասնիկյանն այս պատասխանատու պոստում Մոսկվայի կուսակցական կազմակերպության մարտունակությունը բարձրացնելու ոգով հսկայական աշխատանք է տանում։ Նա համարյա ամեն օր ելույթներ է ունենում արդյունաբերական ձեռնարկություններում և զինվորական մասերում, զեկուցումներով հանդես գալիս կոնֆերանսներում, խորհրդակցություններում և ժողովներում։ Մյասնիկյանի ջանքերով բարձրացվում է կուսակցական կազմակերպությունների քաղաքական-կազմակերպական աշխատանքների մակարդակը, ամրապնդվում են կուսակցական բջիջները, բարելավվում է կադրերի ընտրության գործը, բարձրանում է քաղաքի կառավարման համակարգում կուսակցական կազմակերպության ղեկավար դերը։ Նրա նախաձեռնությամբ կուսակցական դպրոցներ են բացվում մայրաքաղաքի շատ շրջաններում։ 1920 թ. մարտի 18-ից նրա խմբագրությամբ սկսում է լույս տեսնել կուսակցության Մոսկվայի կոմիտեի «Կոմունիստիչեսկի տրուդ» թերթը. որը խոշոր դեր է խաղում մայրաքաղաքի կուսակցական կազմակերպության կյանքում։ Մյասնիկյանը մեծ ծավալի գրական-ստեղծագործական աշխատանք է կատարում՝ համարյա ամեն օր հոդվածներ, գրախոսականներ, կոչեր գրելով «Պրավդա», «Իզվեստիա», «Կոմունիստիչեսկի տրուդ» և այլ թերթերի համար։

1920 թ. ապրիլի 23-ը Ալ. Մյասնիկյանի կյանքի անմոռանալի էջն էր։ Նախորդ օրը՝ ապրիլի 22-ին, լրացել էր Վ. Ի. Լենինի ծննդյան 50-ամյակը։ Մյասնիկյանի նախաձեռնությամբ ՌԿ(բ)Կ Մոսկվայի կոմիտեն որոշում է նշել առաջնորդի հոբելյանական տարելիցը։ Հոբելյարը դեմ էր, բայց այնպես է ստացվում, որ Մոսկվայի կազմակերպության անդամներն ապրիլի 23-ին հավաքվում են հանդիսավոր մեծ ժողովի։ Ժողովը ներածական խոսքով բացում է Մյասնիկյանը, ապա առաջնորդի մասին ջերմ հուշերով հանդես են գալիս կուսակցական մի շարք գործիչներ։ Երեկոյի առաջին մասի ավարտին Ալ. Մյասնիկյանը հեռախոսով կապվում է Լենինի հետ և մասնակիցների անունից նրան հրավիրում համերգային բաժնին։ Իլյիչը, վերջապես, համաձայնվում է և շուտով ժամանում։ Բուռն օվացիայով են ներկաները դիմավորում Լենինին, որը, հանդես գալով, հուշեր է պատմում ընդհատակյա պայքարի, կուսակցության նվիրյալ մարտիկների մասին։

Մի քանի օր հետո, 1920 թ. մայիսի 1-ին, երբ անցկացվում էր Համառուսաստանյան կոմունիստական շաբաթօրյակ, Կրեմլում կազմակերպված շաբաթօրյակից հետո Լենինը հեռախոսով կապվում է Մյասնիկյանի հետ և նրան խնդրում միասին այցելել Մոսկվայի շրջանները։ Գալիս են նախ Բաումանի շրջան, որտեղ բանվորական ակումբում Լենինը փայլուն ելույթ է ունենում։

Մյասնիկյանի ուղեկցությամբ Լենինն այնուհետև այդ օրը լինում է Զագորսկու անվան ակումբում, Պրեսնյայի շրջանի նախկին Պրոխորովյան գործարանում, Զամոսկվորեցկի շրջանի Մարքսի անվան ինստիտուտում, ելույթներ ունենում, ամենուրեք հանդիպելով մասսաների ջերմ ու սրտագին ընդունելությանը։

1926 թ. ապրիլի վերջերին սպիտակ լեհերը հարձակման անցան սովետական երկրի դեմ։ Հունիսի սկզբին Մյասնիկյանը գործուղվեց Արևմտյան ռազմաճակատ՝ որպես ռազմաճակատի քաղբաժնի պետ։

Նույն թվականի հոկտեմբերի սկզբին Մյասնիկյանը նշանակվում է Մոսկվայի սովետի՝ ռազմաճակատին օգնություն կազմակերպող հանձնաժողովի կազմում, իսկ դեկտեմբերի կեսերին Կ. Վորոշիլովի, Ֆ. Ձերժինսկու և Վ. Մենժինսկու հետ ձեռնամուխ է լինում զինվորական հիմնարկների կենտրոնական-ապարատների աշխատանքների սկզբունքների մշակմանը, դատարում կուսակցության Կենտկոմի այլ կարևոր հանձնարարություններ։

1920 թ. նոյեմբերին Հայաստանում սովետական կարգեր հաստատվեցին։ 1921 թ. մարտի 21-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմը որոշում է Հայաստան աշխատանքի ուղարկել այն ժամանակվա ամենախոշոր բոլշևիկյան հայ գործչին՝ Ալ. Մյասնիկյանին։ Կենտկոմի Կազմբյուրոյի որոշմամբ Մյասնիկյանը նշանակվում է Հայհեղկոմի նախագահ և մտցվում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, նրա բյուրոյի և կուսակցության Կովկասյան բյուրոյի կազմի մեջ։

Ալ. Մյասնիկյանը մեծագույն պատասխանատվությամբ է ստանձնում կուսակցության նոր, դժվարին հանձնարարությունը։ Կովկաս մեկնելուց առաջ նա հանդիպում է ունենում Վ. Ի. Լենինի հետ և նրանից ստանում շատ կարևոր ցուցումներ։ Նա առաջնորդին խնդրում է իր մտքերը շարադրել գրավոր, որպես երկրամասի կոմունիստներին ուղղված պատգամ։ Վ. Ի. Լենինը 1921 թ. ապրիլի 14-ին գրում է «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» դիրեկտիվ-նամակը և հանձնում Մյասնիկյանին։ Նամակում առաջնորդը նշում է անդրկովկասյան նորաստեղծ սովետական հանրապետություններում նոր կարգերի ամրապնդման և սոցիալիստական շինարարության ծավալման ուղղությամբ երկրամասի կոմունիստների կոնկրետ խնդիրները, առաջադրելով մի ամբողջ պատմական ծրագիր։ Անդրադառնալով Կովկասում սոցիալիզմին անցնելու յուրահատկության հարցին, նա գրում էր. «Ավելի դանդաղ, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ անցում դեպի սոցիալիզմ,— ահա թե ինչն է հնարավոր ու անհրաժեշտ Կովկասի հանրապետությունների համար՝ ի տարբերություն ՌՍՖՍՀ-ի։ Ահա թե ինչն է հարկավոր հասկանալ ու կարողանալ իրականացնել, ի տարբերություն մեր տակտիկայի»[21]։

1921 թ. մայիսի 4-ին ժամանելով Երևան, Ալ. Մյասնիկյանն անմիջապես անցնում է Հայաստանի հեղկոմի նախագահի պարտականությունների կատարմանը։ Մայիսի 9-ին հրավիրվում է Երևանի կուսակցական կազմակերպության և արհեստակցական միությունների միացյալ ժողով, որտեղ հանրապետության նոր ղեկավարը հանդես է գալիս իր առաջին ծրագրային ճառով։ «Մենք կարծում ենք,— ասաց նա,— որ ժողովրդի բոլոր շերտերը մեզ օգնության կգան, որովհետև հայ ժողովուրդը շատ ծանր օրեր է ապրում»։ Եվ անդրադառնալով Հայաստանում ստեղծված ահավոր վիճակին, շեշտում է. «Դրությունն անմխիթար է։ Սա ամենադաժան, ամենադժբախտ երկիրն է Անդրկովկասում։ Դեռ այս երկրի փողոցներում, դաշտերում, հիշեք Ալեքսանդրապոլը. ցրված են դիակներ։ Քաղցն ահագին է։ Պետք է կռվել քաղցի դեմ»[22]։ Այս առաջին ճառում էլ նա դատապարտում է աշխատավոր գյուղացիության և մտավորականության նկատմամբ Հայաստանում սովետական իշխանության առաջին ամիսներին

21 Վ. Ի. Լենին. Երկ. հ. 43, էջ 239։

22 «Կոմունիստ», 10 մայիսի 1921։

թույլ տրված սխալները, պահանջում նրանց հանդեպ վարել մեղմ քաղաքականություն, ինչ-որ չափով զիջումներ անել։

1921 թ. մայիսի 21-ին Հայաստանի հեղկոմը վերակազմվեց ժողովրդական կոմիսարների խորհրդի, որի նախագահ և միաժամանակ ռազմական գործերի ժողկոմ հաստատվեց Ալ. Մյասնիկյանը[23]։

Նորաստեղծ կառավարությունը և նրա նախագահը հսկայական ջանքեր էին գործադրում լուծելու մեկը մյուսից հրատապ, կենսական, բարդ խնդիրներ։ Շտապ միջոցներ էին ձեռք առնվում ժողովրդին սովի ճիրաններից փրկելու համար, աստիճանաբար սկսեց կարգավորվել կազմալուծված հասարակական կյանքը, հաղթահարվում էին համաճարակները, դանդաղ բարձրանում էր ծայր աստիճանի քայքայված տնտեսությունը։ Անհետաձգելի միջոցներ էին ձեռնարկվում հանրապետության միջազգային դրությունն ամրապնդելու ուղղությամբ։ Իրականացվում էին հողաբաշխման ու հողաշինարարության դժվարին աշխատանքներ։

Հայաստանի աշխատավորությունը ստիպված էր նոր, արյունահեղ կռիվների մեջ մտնել Զանգեզուրում ապաստանած դաշնակների հակահեղափոխությունը վերացնելու համար։ Կարգավորվում էր գաղթականների վիճակը, մի բան, որ թվում էր անհնարին։ Սկսվեց ներգաղթը։ Սովետական տնտեսական շինարարության աշխուժացման և ՆԷՊ-ին անցնելու համեմատ մեծացավ սպառողական կոոպերացիայի դերը։ Ալ. Մյասնիկյանը հսկայական նշանակություն էր տալիս հին կադրերի օգտագործման և նոր կադրերի պատրաստման խնդրին։ Նա մշտապես ընդգծում էր ամենուրեք հեղափոխական կարգ ու կանոն հաստատելու, աշխատանքի արդյունավետ կազմակերպման, աշխատանքային կարգապահության բարձրացման անհրաժեշտությունը։ Այդ ամենը նպաստում էին հայ ժողովրդի սովետական պետականության ստեղծմանն ու ամրապնդմանը, պետական նոր կարգի ամուր հիմքեր դնելուն։ Արդեն 1921 թ. վերջերին հանրապետությունում ստեղծվել էր սովետական իշխանության մարմինների կայուն համակարգ, կազմակերպված պետական մեխանիզմ։

Ալեքսանդր Մյասնիկյանն անգնահատելի ծառայություն ունի հայ ժողովրդի հոգևոր վերածննդի գործում։ Ավերածությունների ու քայքայման, քաղցի ու համաճարակների դժնդակ պայմաններում նոր իշխանությունը ձեռնամուխ եղավ կուլտուրական շինարարության։ Անգրագիտության վերացում, աշխատավոր լայն մասսաների լուսավորության գործի կազմակերպում, նոր դպրոցների բացում, ուսուցչական կադրերի պատրաստում, ակումբների, գրադարանների, կուլտուրայի օջախների ստեղծում, մամուլի և հրատարակչական գործի կարգավորում, առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնում, ազգային լեզվի և ազգային գրականության զարգացմանն ուղղված միջոցառումներ, մեծագույն հոգատարություն մտքի մշակների, գրականության և արվեստի գործիչների նկատմամբ՝ ահա այն միջոցառումների ոչ լրիվ ցանկը, որոնց իրականացմանն էին ուղղված Մյասնիկյանի ամենօրյա ջանքերը։

Սովետական Հայաստանի կառավարության նախագահի գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում գաղութահայության հետ մայր հայրենիքի կապերի ստեղծումն ու ամրապնդումը։ Նա ուշադիր հետևում էր արտասահմանի հայ գաղթական զանգվածների կյանքին, մտահոգվում նրանց ճակատագրով, խորապես ապրում նրանց հոգսերով և ազգային ցավերով։

1922 թ. հունվարի 26—29-ը Երևանում տեղի ունեցավ Հայաստանի կոմկուսի առաջին համագումարը, որը խոշորագույն իրադարձություն էր հանրապետության կուսակցական կազմակերպությունների կյանքում։ Համագումարում Ալ. Մյասնիկյանը հանդես եկավ ՌԿ(բ)Կ համառուսաստանյան 11-րդ կոնֆերանսի արդյունքների և Հայաստանում սովետական շինարարության ընթացքի մասին զեկուցումներով։

---

23 «Կոմունիստ», 24 մայիսի 1921։

Հայաստանի կոմկուսի առաջին համագումարի ավարտից մեկ օր հետո, հունվարի 30-ին, բացվեց սովետների համահայաստանյան առաջին համագումարը, որտեղ հանրապետության ութամսյա գործունեության մասին հաշվետվությամբ հանդես եկավ Ալ. Մյասնիկյանը։ Հանրապետության նախագահի հաշվետու զեկուցման մեջ տրված էր Հայաստանի տնտեսական ու քաղաքական իրավիճակի ճիշտ պատկերը, նշված էին հերթական խնդիրները և դրանց լուծման հնարավորություններն ու միջոցները, բացահայտված էին հետագա զարգացման հեռանկարները։

Հայաստանում աշխատելու կարճ ժամանակամիջոցում Ալ. Մյասնիկյանն իր մեծ հմայքով դարձավ աշխատավոր մասսաների սիրելի առաջնորդը. նրա շահերի հարազատ արտահայտիչն ու իղձերի թարգմանը, նրա սրտակից ու հարազատ բարեկամը։

1922 թ. մարտի 12-ից Ալ. Մյասնիկյանը գտնվում էր ձևավորվող Անդրֆեդերացիայի ղեկի մոտ՝ հենց սկզբից զբաղեցնելով ֆեդերատիվ պետության դաշնակցային խորհրդի նախագահի, իսկ հետո ՌԿ(բ)Կ Անդրկովկասի երկրային կոմիտեի առաջին քարտուղարի պաշտոնները։ Նրա անմիջական ղեկավարությամբ էին լուծվում ֆեդերացիայի կյանքի գրեթե բոլոր կարևորագույն հարցերը։ Այդ պոստերում հավատարիմ լենինյանը գործնական-կազմակերպական և գաղափարական-քաղաքական վիթխարի աշխատանք կատարեց Անդրկովկասում ազգամիջյան խաղաղության հաստատման, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի սովետական հանրապետությունների տնտեսական ամրապնդման, ՍՍՀՄ-ի ստեղծման նպատակով երկրամասի ժողովրդական մասսաների ծավալած լայն շարժումը ղեկավարելու ուղղությամբ։ Նրա հմուտ ղեկավարությամբ Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունը խոշոր հաջողություններ ձեռք բերեց տնտեսության և լուսավորության մարզերում, հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում։

Ինչպես Հայաստանում, այնպես էլ Անդրֆեդերացիայում աշխատելու տարիներին Ալեքսանդր Մյասնիկյանն անդադրում զբաղվել է գրական-ստեղծագործական աշխատանքով, իր հոդվածներով, գրախոսություններով, բանավոր ելույթներով, զրույցներով, դիտողություններով ու խորհուրդներով ուղղություն տվել երկրամասի գրական-հասարակական կյանքին, հետևողականորեն պաշտպանել գրականության և արվեստի կուսակցականության լենինյան սկզբունքները։ Հիմնադրելով «Զարյա վոստոկա» թերթը, Մյասնիկյանը նրա անփոփոխ խմբագիրն էր, այնտեղ տպագրված բազմաթիվ խմբագրականների, հոդվածների, գրախոսականների հեղինակը։ Մյասնիկյանի հոդվածները պարբերաբար լույս էին տեսնում նաև «Մարտակոչ», «Խորհրդային Հայաստան» թերթերում, երկրամասի մամուլի ուրիշ շատ օրգաններում։

Գտնվելով Անդրկովկասում, Ալեքսանդր Մյասնիկյանը մնում էր որպես համամիութենական մասշտաբի կուսակցական և պետական խոշոր գործիչ։ Նա երկրի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ էր և ՍՍՀՄ ԿԳԿ-ի Նախագահության անդամ։ Համակուսակցական մի շարք համագումարների պատվիրակը նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի անդամության թեկնածու էր։

1925 թ. մարտի 22-ին անսպասելիորեն կտրվեց կուսակցության ու ժողովրդի հարազատ զավակի՝ Ալեքսանդր Մյասնիկյանի կյանքի թելը։ Նշանավոր բոլշևիկներ Սոլոմոն Մոգիլևսկու և Գևորգ Աթարբեկյանի հետ նա ավիացիոն վթարի զոհ դարձավ։ Թանկագին ընկերների ողբերգական մահը խոր վիշտ պատճառեց ժողովրդին և կուսակցությանը։

Անցել է մեկ դար ականավոր հեղափոխականի, նշանավոր կուսակցական ու պետական գործչի ծննդյան օրից։ Ժամանակն անկարող է մոռացության հանձնել բոլշևիկ-լենինյանի թանկագին հիշատակը։ Նրա պայծառ կերպարը ապրում է սովետական ժողովրդի շարունակվող հերոսապատումների, մեր առաջընթացի և արարման մեջ։ Նա իր հետևից թողել է անմար ու մշտաշող մի գիծ, որ խորհրդանշում է նրա հավերժությունը գալիք սերունդների հիշողության մեջ։

АЛЕКСАНДР МЯСНИКЯН
(К 100-летию со дня рождения)

Доктор ист. наук Г. Р. СИМОНЯН

Резюме

Пламенный революционер-большевик, верный ученик и соратник В. И. Ленина, видный деятель Коммунистической партии и Советского государства Александр Федорович Мясникян (Мартуни) за свою недолгую жизнь (1886—1925) оставил глубокий след в истории Белорусской, Московской, Закавказской партийных организаций. С его именем связаны создание Коммунистической партии Белоруссии и провозглашение Белорусской Советской Социалистической Республики; он был по рекомендации В. И. Ленина первым секретарем Московского комитета РКП(б), являлся первым председателем Совнаркома Армянской ССР. Находясь на посту первого секретаря Закавказского краевого комитета партии и председателя союзного правительства Закфедерации, Ал. Мясникян отдал много сил делу поднятия народного хозяйства Закавказских советских республик, укрепления дружбы между народами края.

Ал. Мясникян оставил богатое теоретическое наследие. Вместе со Ст. Шаумяном и С. Спандаряном он является основоположником армянского марксистского литературоведения.